

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ

**ԱՆՁԻ ԻՆՔՆԱԿԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՄՓՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԺԹ.00.03- «Սոցիալական հոգեբանություն, արտակարգ իրավիճակների հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Պետական Համալսարանում

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

հոգեբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ Վլ. Հ. Միքայելյան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝

հոգեբանական գիտությունների
դոկտոր՝ Ս.Ռ.Գևորգյան

հոգեբանական գիտությունների
թեկնածու՝ Դ.Ս.Ամիրջյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Ուրարտու» համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012թ.հոկտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2012թ. սեպտեմբերի 28-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության
064 մասնագիտական խորհրդի գիտ.
քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու՝

Կ.Ե.Վարդանյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Մարդու սոցիալական կյանքի կարևորագույն բնութագրումներից մեկը վերաբերմունքն է սեփական անձի նկատմամբ: Հոգեբանության մեջ գոյություն ունեցող կարծրատիպային կարծիքը, որ «ինքնավերաբերմունք» երևույթը հարկավոր է ուսումնասիրել անձի հոգեբանության սահմանների ներսում, ի սկզբանե սահմանափակել է տվյալ երևույթի խորը ուսումնասիրությունը հոգեբանական այլ բնագավառների շրջանակներում: Մինչդեռ ակնհայտ է, որ ինքնավերաբերմունքը լիարժեք սոցիալական երևույթ է և վերջինիս ուսումնասիրությունը սոցիալական հոգեբանության սահմաններում բացահայտում է տվյալ երևույթի հասկացման նոր տեսանկյուններ:

Գիտական աղբյուրների վերլուծությունը ինքնավերաբերմունքի հարցի շուրջ ցույց է տալիս, որ այն բավարար չափով և խորությամբ չի ուսումնասիրվել սոցիալ-հոգեբանական տեսանկյունից: Որոշ հեղինակներ անդրադարձել և ուրույն կարծիք են հայտնել այս հարցի վերաբերյալ, սակայն այդ աշխատանքներում նույնպես ինքնավերաբերմունքը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ ամբողջապես և լիովին պարզաբանված չէ:

Այդ իսկ պատճառով, առավել քան երբևէ, այսօր անհրաժեշտություն է առաջացել բացահայտել և վերլուծել ինքնավերաբերմունքը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, որը կարող է ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն ունենալ:

Ինքնավերաբերմունքը, միայն սոցիալ-հոգեբանական երևույթ լինելով հանդերձ կարող է ծրագրավորել ինչպես վարքի բնույթը, այնպես էլ ինքնաձանաչման առանձնահատկությունները: Այդ իսկ պատճառով էլ ինքնավերաբերմունքն արդիականանում է սոցիալական հարթության վրա:

Անձը պատասխանատվություն չի կրում սեփական ինքնավերաբերմունքի համար, քանի որ այն պարտադրվում է կողքից, առաջնային ռեֆերենտային խմբերի կողմից:

«Ինքնավերաբերմունք» երևույթը բացառիկ տեղ է գրավում սոցիալական հոգեբանության դաշտում: Տվյալ համոզմունքը սկզբունքորեն կիսում են հոգեբանների ճնշող մեծամասնությունը, հաշվի առնելով թեկուզ միայն այն փաստը, որ սոցիալական և ասոցիալական վարքում ինքնավերաբերմունքի խնդիրը գտնվում է գիտական վերլուծության կիզակետում:

Ինքնավերաբերմունքի ձևավորումն ընթանում է սոցիալական փոխհարաբերությունների միջավայրում: Անձն իր ողջ կյանքի ընթացքում ներառում է սոցիալական աշխարհը: Անձի ինքնավերաբերմունքը ձևավորող մերձավոր սոցիալական շրջապատը հոգեբանորեն տեղափոխվում է վերջինիս ներհոգեկան հարթություն, որտեղ էլ կազմավորում է սոցիալական ինքնավերաբերմունք, որը կյանքի որոշակի փուլում գերիշխող է, սակայն տարիքի և հոգեկան լիարժեք զարգացման հետ մեկտեղ մարդը զգում է անկախ՝ էքզիստենցիալ ինքնավերաբերմունքի ձևավորման պահանջմունք: Այս

իմաստով, մենք տարբերակում ենք երկու հասկացություն՝ «սոցիալական» և «էքզիստենցիալ» ինքնավերաբերմունք հասկացությունները: Եվ այս տարբերակման մեջ նույնպես ամփոփված է հետազոտության արդիականությունը:

Մենք «ինքնավերաբերմունք» երևույթը դիտարկում ենք տարիքային փուլերի զարգացման սոցիալ-հոգեբանական տեսանկյունից: Հետաքրքիր կերպով է ներկայանում անձի ինքնավերաբերմունքի ուսումնասիրությունը որոնումների և կյանքի իմաստի ձեռքբերման տեսանկյունից: Սա մի գործընթաց է, որը տեղ է գտնում տարիքային բոլոր փուլերում, մեկ տարբերությամբ՝ արդյոք այն գիտակցաբար, թե ոչ գիտակցաբար է ընթանում: Այս տեսանկյունից դիտարկված հոգեկան զարգացման գործընթացն ինչպես արդիական է, այնպես էլ նոր:

Գիտության մեջ արդեն իսկ գոյություն ունեցող հետազոտությունները և հիմնավոր աշխատանքներն ավելի շատ ուշադրություն են դարձնում ինքնավերաբերմունքի ձևավորման գործընթացի վրա, քան վերջինիս վրա այլ հոգեբանական գործոնների (ինքնագնահատական, տարիք, վարք) ազդեցությանը: Ինքնավերաբերմունքի խնդիրը մենք դիտարկում ենք անձի կայացման լայն գործընթացի հետ կապված, իսկ սա նշանակում է, որ մեր հետազոտության մեջ անհրաժեշտ կերպով պետք է լուսաբանվեն ինքնավերաբերմունքի և տարիքի փոխազդեցության հոգեբանական առանձնահատկությունները:

Հետազոտության արդիականությունը հատկանշվում է նաև վերջինիս կիրառական նշանակությամբ:

Հետազոտության նպատակն է՝

1. Բացահայտել «ինքնավերաբերմունք» երևույթի զարգացման օրինաչափությունները:

2. Առաջարկել սեփական մոտեցումը և մեկնաբանությունն ինքնավերաբերմունքի զարգացման սոցիալ-հոգեբանական գործընթացի վերաբերյալ:

Հետազոտության օբյեկտն անձի ինքնավերաբերմունքի ձևավորման սոցիալ-հոգեբանական գործընթացն է տարիքային փուլերի դաշտում:

Հետազոտության առարկան է ինքնավերաբերմունքի ձևավորման փոխապայմանավորվածության ուսումնասիրությունն անձի տարիքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ անձի ինքնավերաբերմունքը ձևավորվում է անձի էնդո և էքզոապրոմների միջև սոցիալ-հոգեբանական կոնֆլիկտի արդյունքում: Ընդ որում, 20-40 տարեկանում համապատասխան (ադեկվատ) ինքնավերաբերմունքը ձևավորվում է որպես սոցիալապես կախյալ, իսկ 40-60 տարեկանում՝ որպես ռեֆլեքսիվ-էքզիստենցիալ:

Հետազոտության հիմնական խնդիրներն են՝

1. Բազմակողմանիորեն և մանրամասնորեն վերլուծել հոգեբանական գիտության մեջ գոյություն ունեցող ինքնավերաբերմունքի ձևավորման տեսություններն ու կոնցեպցիաները:

2. Վերլուծել «սոցիալական» և «էքզիստենցիալ» ինքնավերաբերմունք հասկացությունները:

3. Վերլուծել անձի սոցիալ-հոգեբանական տարիքի և ինքնավերաբերմունքի միջև հարաբերակցության և հնարավոր կապերի գոյությունը:

4. Ուսումնասիրել տարիքի հնարավոր ազդեցությունն անձի ինքնավերաբերմունքի ձևավորման սոցիալ-հոգեբանական գործընթացի վրա:

Հիմնախնդրի տեսամեթոդաբանական հիմքերը: Անձի սոցիալ-հոգեբանական տարիքի և ինքնավերաբերմունքի հարաբերակցության ուսումնասիրության համար էական նշանակություն ունեն հոգեբանական և սոցիալ-հոգեբանական մոտեցումների, տեսությունների և կոնցեպցիաների մի շարք դրույթներ, որոնք մեր հետազոտության մեթոդաբանական հիմքն են հանդիսանում: Դասակնորեն յուրաքանչյուր գիտական հետազոտության մեթոդաբանությունը հիմնվում է ինչպես հետազոտողի ուսումնասիրության կոնկրետ մոտեցումների, այնպես էլ այն տեսությունների ու կոնցեպցիաների վրա, որոնք կիրառում է տվյալ մոտեցումը:

Աշխատանքի տեսական հիմք են ծառայել հոգեբանության մեջ անձի ինքնավերաբերմունքի խոր ու հիմնավոր հետազոտությունները՝ Ա.Ադլեր [2], Ռ.Բեռնս [10], Ե.Ի.Գոլովախա, Ա.Ա.Կրոնիկ [21], Ու.Ջեյմս [26], Ա.Ս.Կոլիշկո [30], Ի.Ս.Կոն [33,34,35], Ա.Ն.Լազուրսկի [42], Ա.Ն.Լեոնտև [43], Բ.Լիվեհուդ [46], Ի.Կ.Մակլինա-Պիլս [48], Վ.Ս.Մուխինա [50], Գ.Օլլպորտ [53], Ս.Ռ.Պանտելեն [57,58,59], Կ.Ուիլբեր [63], Ռաուստե ֆոն Վրիխտ [66], Ս.Լ.Ռուբինշտեյն [68], Ն.Ի.Սարջվելաձե [70,71], Ա.Գ.Սպիրկին [74], Վ.Վ.Ստոլին [75,76], Ի.Ի.Չեսնոկովա [79,80], Ե.Վ.Շորոխովա [82], Վ.Ֆրանկ [83], Է.Էրիկսոն [85], Վ.Գ.Յունգ [87,88,89], Ս.Կուպերսմիթ [90], Hattie J. [91], Hoge D. [92], Kaplan H.B. [95], Ս.Ռոզենբերգ [102], Wylie R.C. [107]:

Հետազոտության մեջ մենք հիմնվում ենք թեմայի ուսումնասիրության սոցիալ-հոգեբանական մեթոդաբանական մոտեցման վրա:

Աշխատանքը հիմնվում է հետևյալ մեթոդաբանական սկզբունքների վրա՝

ա) ամբողջականության սկզբունքը, որը ենթադրում է հետազոտության բոլոր խնդիրների ամբողջականության իմաստավորման մեկնաբանությունը: Սա նշանակում է, որ ատենախոսության բոլոր խնդիրները պետք է ենթարկվեն ներքին տրամաբանական կապի օրինաչափությանը: Մեր աշխատանքում այդ կապը երևում է ինքնավերաբերմունքի սոցիալ-հոգեբանական մոտեցման և անձի տարիքային զարգացման փուլերի միջև: Այդ տրամաբանական կապի շնորհիվ մենք հնարավորություն ստացանք դիտարկել տարիքային զարգացման փուլերը սոցիալ-հոգեբանական հարթության վրա,

բ) հոգեկան երևույթների դիտարկման դինամիկ սկզբունքը, որից ելնելով մենք դիտարկում ենք ինքնավերաբերմունքի սոցիալ-հոգեբանական զարգացումը տարիքային տարբեր խմբերում: Այսինքն, մենք չենք դիտարկում «ինքնավերաբերմունք» երևույթը որպես քարացած կառույց,

գ) պատմականության սկզբունքը, որն ուսումնասիրում է խնդիրն իր զարգացման և կայացման սոցիալ-հոգեբանական գործընթացում:

Գիտական նորույթը: Գիտության մեջ գոյություն ունեցող ինքնավերաբերմունքի և տարիքի խնդիրների վերաբերյալ մոտեցումները կենտրոնացած են դրանց առանձին ուսումնասիրության վրա: Թվով քիչ աշխատանքները, որոնք դիտարկում են տարիքն ու ինքնավերաբերմունքը փոխապայմանավորվածության տեսանկյունից, ավելի շուտ, կրում են ոչ թե սոցիալ-հոգեբանական, այլ սոցիոլոգիական բնույթ:

Տեսական վերլուծության և էմպիրիկ տվյալների միջոցով տարբերակում ենք «ինքնավերաբերմունք» հասկացության երկու տեսակ՝ «սոցիալական» և «էքզիստենցիալ»:

Դիտարկում ենք սոցիալական և էքզիստենցիալ ինքնավերաբերմունքների դիմամիկան տարիքային փուլերի համատեքստում:

Անձի ինքնավերաբերմունքն իր ձևավորման ու զարգացման շարժընթացում դիտարկում ենք նոր՝ սոցիալ-հոգեբանական տեսանկյունից:

Առանձնահատուկ ուշադրության է արժանացել անցումը սոցիալական ինքնավերաբերմունքից դեպի էքզիստենցիալ ինքնավերաբերմունք:

Հետազոտության տեսական նշանակությունը մեկնաբանվում է ինքնավերաբերմունքի խնդրի հասկացման նոր՝ սոցիալ-հոգեբանական մոտեցման և անձի տարիքային զարգացման փուլերի հետ նրա հարաբերակցության տեսակետից: Հետազոտության մեջ սոցիալ-հոգեբանական տեսանկյունից ենք մոտեցել ինքնավերաբերմունքի ձևավորման գործընթացին և վերջինիս կախվածությանը անձի տարիքից: Այս երկու երևույթների հարաբերակցության ուսումնասիրությունն նույնպես կատարվել է, որը կնպաստի ինքնավերաբերմունքի առավել խորը հետազոտությանը, հատկապես սոցիալական հոգեբանության դաշտում:

Հետազոտության կիրառական նշանակությունը.

1. Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել սոցիալական հոգեբանության ոլորտում ինքնավերաբերմունքի, ինքնագնահատականի և Ես-կոնցեպցիայի վերաբերյալ հատուկ դասընթացների շրջանակներում:

2. Հետազոտությունը գործուն ուղեցույց կարող է ծառայել հոգեբանների, ծնողների, մանկավարժների համար, ընտանիքում ծնող-երեխա փոխհարաբերությունների կարգավորման հարցերում և միջանձնային բոլոր տեսակի փոխհարաբերություններում:

3. Հետազոտության արդյունքները, որպես հոգեբանական կողմնորոշում, կարող են ներդրվել պրակտիկ հոգեբանական գործունեության մեջ, ընտանիքներում, ուսումնամանկավարժական հաստատություններում, հիմնարկ-ծեռնարկություններում միջանձնային պատշաճ, ներդաշնակ և արդյունավետ փոխադարձ հարաբերությունների ստեղծման ձևավորման նպատակով:

4. Հետազոտության արդյունքները միաժամանակ կարող են հիմք հանդիսանալ մեծ արժեք ներկայացնող նոր մտահղացումների համար:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթներն են՝

1. Անձի ինքնավերաբերմունքը բաժանվում է հիմնական տեսակների՝

ա) ինքնավերաբերմունք, որը ներշնչված է սոցիալական շրջապատի կողմից (էքզիստենցիալ վերաբերմունք) և

բ) էքզիստենցիալ ինքնավերաբերմունք, որը բացահայտվում է անձի մտորումներում ինքն իր մասին, կյանքում գրաված տեղի, սեփական կյանքի իմաստի մասին և, որոնք հնարավորինս ազատ են սոցիալական շրջապատի գնահատականներից (էնդոինքնավերաբերմունք):

2.Սոցիալական միջավայրի արժեքները ձևավորում են անձի ինքնավերաբերմունքի առաջին մակարդակը:

3.Անձի ինքնավերաբերմունքի ձևավորումն սոցիալ-հոգեբանական գործընթաց է, քանի որ ընթանում է միջանձնային հարաբերությունների հարթության վրա:

4.Էքզիստենցիալ էքզիստենցիալ ինքնավերաբերմունքի (էնդոինքնավերաբերմունքի) զարգացման անհրաժեշտ մակարդակ է:

Տեսական և կիրառական դրույթների հիմնավորվածությունն ու հավաստիությունը: Աշխատանքի արդյունքում ստացած տեսական դրույթները մշակվել և հիմնավորվել են գրականության վերլուծության և էմպիրիկ հետազոտության արդյունքներից բխող եզրակացություններով: Հետազոտության մեթոդներն ընտրվել են փորձարարական գիտությունների սկզբունքներին համաձայն, իսկ քանակական մեթոդների կիրառումից ստացած տվյալները մշակվել են ժամանակակից հոգեբանության և այլ հասարակական գիտությունների մեջ լայնորեն կիրառվող վիճակագրական և մաթեմատիկական մշակման միջոցով:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը: Հետազոտության արդյունքներն անցել են երկարատև գիտական և փորձարարական ճանապարհ: Ուսումնասիրության մեթոդներն անց են կացվել վեց տարիների ընթացքում, ընդ որում պարբերաբար ենթարկվել են շտկումների՝ առավել հուսալի տվյալներ ստանալու նպատակով:

Միջանկյալ արդյունքներն ու հետազոտության որոշ հիմնական դրույթներ ներկայացված են հրատարակված հինգ հոդվածներում ԵՊՀ-ի գիտական աշխատությունների ժողովածուներում: Հետազոտության առանձին դրույթների հիման վրա մշակվել և անց են կացվել դասախոսություններ Երևանի Տնտեսաիրավագիտական և Երևանի Գյուղատնտեսական Համալսարաններում:

Հետազոտությունը քննարկվել և գիտական նախապաշտպանություն է անցել ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական հոգեբանության ամբիոնի ընդլայնված նիստում, որի արդյունքում երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Հետազոտությունը քննարկվել է նաև ԵՊՀԸ բժշկական հոգեբանության ամբիոնի նիստում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից ու հավելվածից: Հիմնական նյութում ներկայացված են 4 գծապատկեր, 11 նկար: Ատենախոսությունը շարադրված է 179 տպագիր էջերի վրա:

ԱՅԵՆԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպված է աշխատանքի նպատակը, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ներկայացված են հետազոտության խնդիրներն ու տեսական գիտամեթոդաբանական հիմքերն ու մեթոդները: Բացահայտված է աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության **«ՏԱՐԻՔ» ԵՎ «ԻՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ»** խորագրով առաջին գլխում հիմնավորվել են անձի «տարիք» և «ինքնավերաբերմունք» հասկացություններն իրենց արժեքային բնորոշումներով և հոգեբանության մեջ վերջիններիս հնարավոր հարաբերակցությամբ:

Այս յուրահատուկ տեսանկյունից ենք փորձել գնահատել անձի վարքն ու վերջինիս ինքնաճանաչման առանձնահատկությունները:

Կյանքի նկատմամբ անձի վերաբերմունքը, ըստ էության, վերաբերմունքն է սեփական անձի նկատմամբ, կյանքի գնահատականը՝ սեփական կյանքում սեփական անձի գնահատականն է, այսինքն ինքնագնահատականը:

Ուրիշների հանդեպ վերաբերմունքը սեփական անձի հանդեպ վերաբերմունքի արտացոլումն է:

Անձի ինքնագնահատականը՝ ինքնավերաբերմունքի ենթակառուցվածք հանդիսանալով, ձևավորվում և զարգանում է ոչ թե հենց անձի, այլ շրջապատի կողմից: Եվ այս իմաստով ինքնագնահատականն ուրիշների գնահատականն է և ոչ թե անձի սեփական գիտակցական վերաբերմունքն իր հանդեպ:

Սոցիալական աշխարհի հետ կոնֆլիկտը ինքնավերաբերմունքի կոնֆլիկտ է, որն ընթանում է անձի սոցիալ- հոգեբանական տարիքի մակարդակում:


Անձը սկսում է գնահատել ինքն իրեն այնպես, ինչպես գնահատում են նրան ուրիշները և որքան շատ է անհամապատասխանությունն ինքնարժեքի զգացողության և ուրիշների գնահատականի միջև, այնքան ավելի հավանական է ներանձնային կոնֆլիկտի ձևավորումը, որը մեր կողմից անվանվում է ներանձնային միայն պայմանականորեն, քանի որ վերջինս ձևավորվում է անմիջապես սոցիալական շրջապատի կողմից:

Ատենախոսության **«ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՎ ԱՆՁԻ ԻՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՀՈՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»** խորագրով երկրորդ գլխում ուսումնասիրելով սոցիալականացման գործընթացը մենք անհրաժեշտ ենք համարել առանձնացնել անձի ինքնավերաբերմունքի ձևավորման օրինաչափությունները:

Ինքնավերաբերմունքը սկսում է ձևավորվել վաղ մանկության տարիներին, որը սոցիալ-հոգեբանական գործընթաց է:

Սոցիալականացման գործընթացում ձևավորվում է ինքնավերաբերմունքի երկու տեսակ՝ էքզոինքնավերաբերմունք և էնդոինքնավերաբերմունք: Էնդոինքնավերաբերմունքի ձևավորումն օրինաչափ սոցիալ-հոգեբանական գործընթաց է, որն ընթանում է կոնֆլիկտային ապրումների բախման և դրանց ազդեցության ներքո:

Էքզիստենցիալ ինքնավերաբերմունքի բուն գործընթացը սխեմատիկորեն մենք պատկերացնում ենք հետևյալ կերպ.



գծ. 1 Էքզիստենցիալ ինքնավերաբերմունքի ձևավորման բուն գործընթացը

Մեր կողմից առանձնացրած ինքնավերաբերմունքի տեսակները հիմնվում են հոգեբանության մեջ ընդունված էնդո և էքզոանձի տարբերակման վրա:

Անձնային ինքնորոշման ուսումնասիրությունը հոգեբանական տեսանկյունից, հնարավոր է դառնում միայն անձի արդեն իսկ ձևավորված ինքնավերաբերմունքի բնույթի ուսումնասիրությամբ: Ինքնորոշումը, որը հաճախ հասկացվում է որպես ինքնաակտուալիզացիա, անմիջականորեն կախված է անձի ինքնավերաբերմունքի որակից: Այդ պատճառով առաջին խնդիրը, որին մենք բախվում ենք հետազոտության մեջ, անձնային ինքնորոշման գործընթացի

ցուցանիչները որոշելն է, որոնք միջոցով կարելի է դասել նրա ընթացքի բնույթի և անձի ինքնավերաբերմունքի որակի մասին:

Հաշվի առնելով, որ անձնային ինքնորոշումն առավել տարողունակ իմաստային համակարգի ձևավորման գործընթաց է, որում ամբողջացած են սեփական անձի և աշխարհի մասին պատկերացումները, մենք անձնային ինքնորոշման հաջողությունը կապում ենք անձի կյանքի գիտակցվածության ցուցանիչների հետ: Կյանքի իմաստների տեսական և էմպիրիկ տիպաբանության հիմքը դրվել է Վ. Ֆրանկլի կողմից, ով դիտարկում էր մարդու սեփական կյանքի իմաստի որոնումների և իրականացման ձգտումը, որպես բնածին մոտիվացիոն միտում, որը բնորոշ է բոլոր մարդկանց և, որը անձի զարգացման ու վարքի հիմնական շարժիչ ուժն է: Նրա ուսմունքի հիմնական դրույթը, որը վերաբերում է կյանքի իմաստի որոնումներին ու ձեռքբերմանը, կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. մարդը ձգտում է կյանքի իմաստ ձեռք բերել և ֆրուստրացիա կամ վակուում է զգում, եթե այդ ձգտումն անիրականանալի է մնում: Վ. Ֆրանկլը բազմիցս շեշտել է վաղ պատանեկան տարիքը որպես սեփական գոյության իմաստի որոնումների սենզիտիվ փուլ:

Ինքնավերաբերմունքի ձևավորման գործընթացը կրում է սոցիալ-հոգեբանական ծանր փոխակերպումներ: Մենք կարող ենք խոսել արդեն իսկ ձևավորված ինքնավերաբերմունքի մասին միայն այնժամ, երբ անձն առավելագույնս է հեռանում սոցիալական կախյալությունից: Ինքնավերաբերմունքի ձևավորումն ընթանում է սոցիալ-հոգեբանական կոնֆլիկտի սահմանի վրա՝ անձի էնդո և էքզոպրումների, սոցիալական կախյալության և էքզիստենցիալ ինքնարժեքի ձեռքբերման ցանկության միջև:

Սոցիալականացման ընթացքում մարդը ձգտում է ամբողջապես ադապտացվել սոցիալական շրջապատին: Նման ադապտացիայի պայմաններից է սեփական անձի նկատմամբ սոցիալական շրջապատի վերաբերմունքի ընդունումը: Սակայն այդ ընդունումը կրում է ակնհայտ հակասական բնույթ: Սոցիալ-հոգեբանական ադապտացիան անձից պահանջում է անհատականացման պահանջմունքի որոշակի ճնշում: Միայն այդ պայմանով անձը կարող է հավակնել սոցիալական կարիերայի նվաճմանը: Մյուս կողմից, սոցիալական նորմերը՝ լինելով համընդհանուր, պահանջում են չանձնավորված կատարում: Երկու պահանջմունքների կոնֆլիկտը ձևավորվում է պատանեկան շրջանում: Սակայն տվյալ կոնֆլիկտն ակտիվ ձև է ստանում կյանքի երկրորդ կեսում, երբ սոցիալականացման գործընթացը հեռանում է սոցիալական ինքնահաստատման արժեքներից: Եվ հենց նման սոցիալ-հոգեբանական իրավիճակում է կարևորվում էքզիստենցիալ ինքնահաստատման պահանջմունքը: Ձևավորված էքզիստենցիալ ինքնավերաբերմունքը չի հակասում սոցիալականին, չի ժխտում վերջինիս: Ընդհակառակն, միայն իր այդ հատկանիշով է մարդը դառնում սոցիալական աշխարհի արժեքների իրական հոգեբանական կրողը: Մարդը սոցիալական է միայն այն դեպքում, եթե նա ազատվել է սոցիալական աշխարհի կախյալությունից: Դա հոգեբանական ազատության ձեռքբերման ուղին է, որը անձի ներհոգեկան հատկանիշ է:

Սոցիալականությունը ներքին էքզիստենցիալ ազատություն է:

Ատենախոսության «**ԷՔՋՈՒՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԻՑ ԴԵՊԻ ԷՆԴՈՒՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ ՇԱՐԺՆՅԱՑԸ ՈՐՊԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ**» խորագրով երրորդ գլխում տեղ են գտել ողջ փորձարարական մասի տվյալներն ու դրանց վերլուծությունը: Այստեղ խոսքը գնում է անձի ինքնավերաբերմունքի և վերջինիս սոցիալ-հոգեբանական լիարժեք հասունության մասին:


Հետազոտության հիմնական մեթոդները: Մեր հետազոտության վարկածի փորձարարական ստուգման համար կիրառել ենք հետևյալ մեթոդիկաները՝

1. Ինքնավերաբերմունքի թեստ-հարցաշար (Վ.Վ.Ստոլին):
2. Հոգեկան վիճակների ինքնագնահատականի ակտորոշման մեթոդիկա (ըստ Այզենկի):
3. Ինքնագնահատականի մակարդակի բացահայտման Կարելինի թեստ:
4. Միևնույն ժամանակ կիրառել ենք դիտման և հարցազրույցի մեթոդներ, որոնք նույնպես բացահայտել են տարիքային երկու խմբերում ինքնավերաբերմունքի ակնհայտ տարբերությունները:

Հետազոտության փորձարարական մասի վերլուծությունը:


Փորձարարական հետազոտությունների արդյունքներն ամբողջությամբ հաստատում են մեր վարկածն այն մասին, որ անձի ինքնավերաբերմունքը ձևավորվում է էնդո և էքզոպարոմների միջև եղած կոնֆլիկտի սահմանի վրա: Արդիական է դառնում այն փաստը, որ ինքնավերաբերմունքը պատանեկան հասակում կախյալ երևոյթ է: Անձի հոգեկան զարգացման աստիճանի հետ միասին ինքնավերաբերմունքն ազատվում է սոցիալական կախյալությունից և ձեռք է բերում անձի հոգեբանական սեփականության կարգավիճակ: Այդ գործընթացն ակնհայտ կերպով ներկայացված է թեստավորման արդյունքում:

1.Վ.Վ.Ստոլինի ինքնավերաբերմունքի թեստ-հարցաշարը ներառում է 7 սանդղակ, որոնց ցուցանիշները վկայում են անձի ինքնավերաբերմունքի տարբեր որակների մասին:




Նկ. 1. 20-40 և 40-60 տարեկան տղամարդկանց արդյունքների համեմատությունը

Նկ. 1 պատկերված է 20-40 և 40-60 տարեկան տղամարդկանց արդյունքների համեմատությունը: Տարբերություններն ակնհայտ են:




Նկ. 2. 20-40 և 40-60 տարեկան կանանց ցուցանիշները

Նկ. 2 ներկայացված են երկու խմբերի կանանց ցուցանիշները: Վերջիններիս արդյունքները խիստ տարբերվում են միմյանցից:



Նկ. 3. 20-40 տարեկան կանանց և տղամարդկանց ցուցանիշները


Նկ. 3 համեմատում ենք առաջին խմբի կանանց և տղամարդկանց ցուցանիշները, որոնք հիմնականում տարբերվում են միմյանցից: Համընկնում են միայն «Ուրիշների վերաբերմունք» և «Ինքնաընդունում» սանդղակների ցուցանիշները:




նկ.4. 40-60 տարեկան կանանց և տղամարդկանց ցուցանիշները

Նկ. 4 ցուցանիշների համեմատությունը: Վերջիններիս արդյունքներն ավելի շատ են համընկնում, քան առաջին՝ կախյալ խմբում: Տարբերությունները միայն «Ուրիշների վերաբերմունք», «Ինքնաընդունում», «Ինքնադեկավարում» սանդղակներում է, որն օրինաչափ և տրամաբանական է:

2.Հոգեկան վիճակների ինքնագնահատականի ախտորոշման մեթոդիկայի (ըստ Այզենկի) արդյունքները ներկայացված են վեց նկարներում:




նկ. 5. 20-40 տարեկան տղամարդկանց (խումբ1) և կանանց (խումբ2) ցուցանիշները




Նկ. 6. 20-40 տարեկան տղամարդկանց և կանանց ցուցանիշները

Նկ. 5 և Նկ. 6 ներկայացված են առաջին խմբի կանանց և տղամարդկանց ցուցանիշների արդյունքները, որտեղ տղամարդկանց արդյունքները գերազանցում են կանանց արդյունքները:




Նկ. 7. կախյալ և էքզիստենցիալ խմբերի տղամարդկանց ցուցանիշները

Նկ. 7 ներկայացված են առաջին և երկրորդ խմբերի տղամարդկանց արդյունքների համեմատությունը:




նկ. 8. կախյալ և էքզիստենցիալ խմբերի կանանց ցուցանիշները

Նկ. 8 ներկայացված են երկու խմբերի կանանց արդյունքների տարբերությունները, որոնք ակնհայտ են: 20-40 տարեկանների արդյունքներն ավելի բարձր են, քան 40-60 տարեկաններինը:



նկ. 9. էքզիստենցիալ խմբի տղամարդկանց (խումբ1) և կանանց (խումբ2) ցուցանիշները



նկ. 10. էքզիստենցիալ խմբի տղամարդկանց և կանանց ցուցանիշները


Նկ. 9 և նկ. 10 ներկայացրել ենք երկրորդ խմբի տղամարդկանց և կանանց արդյունքներն ու դրանց համեմատությունը: Այստեղ տղամարդիկ ցուցաբերում են տազնապայմանության ավելի բարձր ցուցանիշներ, քան կանայք: Ֆրոստրացիայի դեպքում պատկերը հակառակն է: Ագրեսիվությունն ավելի բարձր ցուցանիշներ ունի տղամարդկանց մոտ, քան կանանց: Ռիզիկոյան արդյունքներն ունեն աննշան, չնչին տարբերություններ:

Այգենկի թեստի արդյունքների համաձայն տարիքային առաջին խմբին հստակ կերպով բնորոշ են՝

- ա) տազնապայմանության բարձր մակարդակ,
- բ) ֆրոստրացիայի բարձր մակարդակ,
- գ) ագրեսիայի բարձր մակարդակ,
- դ) ռիզիկոյան բարձր մակարդակ:

Տարիքային երկրորդ խմբի արդյունքները զգալիորեն ցածր են:

3. Ինքնազնահատականի մակարդակի բացահայտման թեստ ըստ Կարելինի



ՈՒ. 11. Կարելինի և Այգենկի թեստերի արդյունքների համահարաբերակցությունը

Կարելինի թեստի համաձայն տարիքային առաջին խմբի արդյունքները խմբվում են 23-10 նիշ ունեցող տվյալների շուրջ, որը խոսում է վերջիններիս կախյալության մասին սոցիալական շրջապատից, ինքնուրույն որոշումներ կայացնելու անկարողությունից:

Տարիքային երկրորդ խմբի արդյունքները խմբվում են 37-24 նիշ ունեցող տվյալների շուրջ, որի վկայությունն է, որ վերջիններս ապրում են համերաշխության մեջ սեփական անձի հետ: Ճանաչում են և կարող են վստահել իրենք իրենց:

Փորձարարական աշխատանքի գործընթացում կիրառված մեթոդիկաները մեզ թույլ տվեցին բացահայտել ինքնավերաբերմունքի ձևավորման որոշ օրինաչափություններ, որոնք հաստատում են մեր վարկածը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը և ամփոփելով հետազոտության արդյունքները հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ինքնավերաբերմունքի ձևավորումն անցնում է երկու հիմնական մակարդակ՝ սոցիալական (կախյալ) և էքզիստենցիալ (անկախ): Սա նշանակում է, որ անձի ինքնավերաբերմունքը նրա հոգեբանական սեփականությունը չի:

Սոցիալական աշխարհի արժեքները կրում են պայմանական բնույթ, մինչդեռ էքզիստենցիալ արժեքներն անձի ինքնորոշման կորիզն են կազմում:

Էքզիստենցիալ արժեքները համեմատած սոցիալականի հետ ունեն ֆունդամենտալ առանձնահատկություն՝ դրանք ներքուստ անկախ և ինքնաբավարար են:

2. Ինքնավերաբերմունքի զարգացման գործընթացում մենք առանձնացնում ենք երկու տարբեր հասկացություն՝ էքզիստենցիալ և էնդոինքնավերաբերմունք.

ա) էքզիստենցիալ և էնդոինքնավերաբերմունքը ձևավորվում է սոցիալական աշխարհի ներգործության և հետազայում նրա հետ խորը փոխներգործության շնորհիվ:

բ) էնդոինքնավերաբերմունքը ձևավորվում է ներքին արժեքների ամբողջության հիմքի վրա: Այն իրավիճակային չէ: Ինչ-որ իմաստով այն անձի ինքնանույնականացման ամբողջության հիմքն է կազմում: Սակայն, ինքնավերաբերմունքի այդ տեսակը նման չէ անձի նարցիսսական սկզբին, այն ակնհայտ պատճառով, որ նարցիսսական սկիզբն ընդհանուր առմամբ կախված է սոցիալական գնահատականներից և սնվում է դրանցով: Մինչդեռ, անձի էնդոինքնավերաբերմունքը բնութագրվում է հենց անկախությամբ սոցիալական կարծիքներից: Ընդ որում, մենք համարում ենք, որ էնդոինքնավերաբերմունքը և էքզիստենցիալ և էնդոինքնավերաբերմունքը անձի «Ես-կոնցեպցիայի» ինքնավար ենթակառուցվածքներ չեն:

3. Ինքնավերաբերմունքի սոցիալական կախյալությունն օրինաչափ կերպով ներանձնային կոնֆլիկտ է առաջացնում, որն ընդհանրապես առաջանում է անձի սոցիալական միջավայրից: Յուրաքանչյուր մարդ ենթարկվում է սոցիալական միջավայրի ազդեցությանը, յուրաքանչյուրիս մեջ սոցիալական աշխարհն ինքնավերաբերմունք է ձևավորում: Սակայն բանն այն է, որ ամեն մեկը կոնֆլիկտային հարաբերությունների մեջ մտնելով միջավայրի հետ, չգիտակցելով, փորձում է պայքարել ընդդեմ հենց այդ միջավայրի կողմից ներշնչված ինքնավերաբերմունքի:

4. Անձի տարիքն ու ինքնավերաբերմունքը գտնվում են փոխադարձ հարաբերակցության և կապվածության մեջ: Տարիքի ու ինքնավերաբերմունքի հարաբերակցությունը կարող է պայմանավորված լինել անձի սոցիալական նվաճումներով: Սոցիալ-հոգեբանական տարիքն արտահայտվում է

«միջանձնային հարաբերություններ», «սոցիալական կարգավիճակ» և «ապագա հաջողություններ կամ կարիերա» հասկացություններում: Սա նշանակում է, որ սոցիալ-հոգեբանական տարիքն ունի մեկ կարևոր առանձնահատկություն՝ այն դիտարկվում է որպես սոցիալական արժեք: Մյուս կողմից այն ինքնավերաբերմունքի խորը ապրում է: Սոցիալ-հոգեբանական տարիքն անկասկած ամենախոցելին է, որը որոշում է ոչ միայն անձնական պիտանելիության հուզական ապրումները, այլ նաև ձևավորում է անձի ինքնավերաբերմունքը:

5.Տարիքը սոցիալ-հոգեբանական կատեգորիա է և մարդը տարիքային յուրաքանչյուր փուլի մեջ որոշակի իմաստ է ներդնում: «Տարիք» հասկացությունը շատ հաճախ զուգորդվում է «կախյալություն» հասկացության հետ: Իսկ կախյալությունը տարածվում է նաև տարիքի սոցիալ-հոգեբանական կողմի վրա, որն էլ ինքնավերաբերմունքի կախվածությունն է սոցիալական աշխարհից:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում.

1.Ք.Ս.Ավետիսյան, Սոցիալ-հոգեբանական տարիքը և անձի ինքնագնահատականի խնդիրները // Տեսական, փորձարարական և կիրառական հոգեբանության հիմնահարցերը (Երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածու), Երևանի համալս. հրատ., 2006թ., էջ 18-26:

2.Ք.Ս.Ավետիսյան, Ինքնագնահատականի զարգացումն օնտոգենեզում // Կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, Միջբուհական գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ, «Ձանգակ-97» հրատ., 2007, էջ 127-132:

3.Ք.Ս.Ավետիսյան, Ինքնագնահատականի ֆենոմենոլոգիան որպես հոգեբանական ուսումնասիրության առարկա // Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու պրակ III), «Ասողիկ» հրատ., Երևան - 2007, էջ 207-216:

4.Ք.Ս.Ավետիսյան, Ինքնավերաբերմունքի էքզիստենցիալ հասկացումը // Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրներ: ԵՊՀ 90-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: «Ասողիկ» հրատ., Երևան-2009թ., էջ 106-117:

5.«Ինքնավերաբերմունք» հասկացության սոցիալ-հոգեբանական վերլուծությունը // Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրներ, ԵՊՀ 90-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան - 2009թ., էջ 250-255:

АВETИCЯН КРИCТИНЕ САМВЕЛОВНА

**СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ЗАКОНОМЕРНОСТИ И ОСОБЕННОСТИ
ФОРМИРОВАНИЯ САМООТНОШЕНИЯ ЛИЧНОСТИ**

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03-“Социальная психология, психология экстремальных ситуаций”.

Защита диссертации состоится 30.10.2012г. в 14.00 ч. на заседании специализированного Совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность диссертационного исследования обуславливается следующими положениями:

Феномен “самоотношение” целесообразно рассматривать в рамках социальной психологии, что позволяет выявить совершенно новые аспекты его понимания.

Самоотношение занимает исключительное место в социальной психологии, в межличностных отношениях. Проблема самоотношения находится в центре научного анализа социального и асоциального поведения. Поведение личности во многом определяется качеством и направленностью самоотношения.

Самоотношение, это социально-психологический феномен, который программирует не только характер поведения, но формирует особенности самосознания личности. Актуальность темы определяется также тем, что мы рассматриваем самоотношение с социально-психологической точки зрения, как в фазах возрастной динамики, так и с точки зрения экзистенциального подхода.

Исследования феномена самоотношения часто не включают в себя факторы социальной среды, в результате чего утрачивается социально-психологический аспект освещения проблемы. Рассмотренное в границах социальной психологии понятие “самоотношение” раскрывает новые аспекты понимания и интерпретации данного феномена.

Цели исследования.

1. Выявить закономерности развития феномена “самоотношение”.
2. Предложить собственный подход и интерпретацию развития самоотношения, как социально-психологического процесса.

Научная новизна исследования.

1. Научная новизна исследования состоит в дифференциации двух основных видов самоотношения – социально-психологического и экзистенциального.
2. Самоотношение рассматривается как феномен, формирующийся в процессе социального общения и взаимодействия.
3. Самоотношение личности рассматривается в контексте социального отношения.

Основные задачи исследования.

1. Досконально и всесторонне проанализировать теории и концепции формирования самоотношения существующие в психологической науке.
2. Проанализировать понятия “социальное” и “экзистенциальное” самоотношение.
3. Проанализировать существование соотношения и возможных связей между самоотношением и социально-психологическим возрастом личности.
4. Исследовать возможное влияние возраста на социально-психологический процесс формирования самоотношения личности.

Теоретическая и практическая значимость исследования.

В нашем исследовании предпринята попытка интерпретации самоотношения в границах социально-психологической парадигмы. Практическая значимость исследования состоит в том, что оно может быть использовано в социальной психологии в качестве учебно-образовательных циклов.

Достоверность результатов.

Достоверность исследования обусловлена методологической обоснованностью, соответствием цели, гипотезы и задач, а также использованными методами. Теоретические положения и выводы работы получены на основе досконального анализа научных источников и экспериментальных данных исследования, обработанных соответствующими статистическими методами.

Апробация и внедрение результатов исследования.

На основании отдельных концептуальных положений исследования нами был разработан и внедрен курс лекций в Ереванском Экономико-юридическом Университете, а также в Ереванском Сельскохозяйственном Университете.

Апробация диссертационной работы состоялась на кафедре социальной психологии факультета философии и психологии ЕГУ, а также на кафедре медицинской психологии ЕГМУ.

По теме диссертации опубликовано 5 статей.

Структура работы.

Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка литературы и приложений. Объем работы составляет 179 страниц, который включает 4 схемы, 11 рисунков, а также 107 источников литературы.

Avetisyan Kristine Samvel

THE SOCIO- PSYCHOLOGICAL REGULARITIES AND CHARACTERISTICS OF PERSON'S SELF - ATTITUDE FORMATION

Dissertation for a degree of Doctor of Psychology by speciality 19.00.03. "Social Psychology, Extreme Situation's Psychology".

The presentation of the dissertation will take place at the session of the Special Board of the Supreme Certifying Commission under the auspices of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, at 14.00 on October 30, 2012.

Address: St. Tigran Mets 17, 0010, Yerevan.

SUMMARY

Actuality.

Urgency of the thesis research is conditioned by the following propositions:

Phenomenon of "self-attitude" is reasonable to consider within the framework of social psychology which allows revealing absolutely new aspects of its understanding.

Self-attitude has an exceptional place in social psychology, in interpersonal relationships. The problem of self-attitude is in the center of scientific analysis of social and asocial

behavior. Person's behavior is mainly determined by the quality and direction of self-attitude.

Self-attitude is a socio-psychological phenomenon which not only programs the character of behavior but also shapes peculiarities of self-actualization of a person. Urgency of the topic is determined also by the fact that we consider self-attitude from the socio-psychological point of view, both in the phases of age dynamics and from the point of existential approach.

Researches of the phenomenon of self-attitude often do not include factors of social environment, in the result of which socio-psychological aspect of treatment of the problem is lost. The notion of "self-attitude" considered within the framework of social psychology discloses new aspects of understanding and interpretation of the given phenomenon.

Objectives of the research.

1. To reveal development regularities of the phenomenon of "self-attitude".
2. To suggest own approach and interpretation of development of self-attitude as a socio-psychological process.

Scientific novelty of the research.

1. Scientific novelty of the research is in the differentiation of two main types of self-attitude – socio-psychological and existential.
2. Self-attitude is considered as a phenomenon shaped in the process of social communication and interaction.
3. Self-attitude of a person is considered in the context of social relation.

Main goals of the research.

1. To analyze thoroughly and comprehensively theories and concepts of formation of self-attitude existing in the psychological science.
2. To analyze concepts "social" and "existential" self-attitudes.
3. To analyze the existence of correlation and possible relations between self-attitude and socio-psychological age of a person.
4. To analyze possible influence of age on socio-psychological process of formation of self-attitude of a person.

The statements represented to the defence are as follows:

1. The self-attitude of a person is divided into main types:
 - a) a self-attitude, which is inspired by the social environment (exo-self-attitude) and

b) existential self-attitude which is exposed in the thoughts of a person and is about himself, about the place he occupies in life. This self-attitude is as free from the assessment of social environment as possible (endo-self-attitude).

2. The values of social environment shape the first level of the person's self-attitude.

3. The development of the person's self-attitude is a socially-psychological, as it proceeds on process interpersonal relationship.

4. Exo-self-attitude is a necessary level for the development of the existential self-attitude (endo-self-attitude).

Theoretical and practical significance of the research.

In our research, an attempt is made to interpret self-attitude within the framework of socio-psychological paradigm. The practical importance of research consists that it can be used in social psychology as educational cycles.

Credibility of results.

Credibility of research is determined by methodological validity, correspondence to the objective, hypothesis and goals, as well as the methods used. Theoretical propositions and deductions of the work are derived on the basis of thorough analysis of scientific sources and experimental data of research processed by corresponding statistic methods.

Approbation and adoption of research results.

On the basis of individual conceptual propositions of the research we have developed and adopted a course of lectures at Yerevan University of Economics and Law, as well as Yerevan Agricultural University. Approbation of the thesis work took place at the Chair of Social Psychology of the Faculty of Philosophy and Psychology of YSU and at the Chair of Medical Psychology of YSMU.

There have been published 5 articles on the subject of the thesis.

Structure of the work.

The thesis consists of introduction, three chapters, conclusions, list of literature and attachments. The volume of the work is 179 pages which includes 4 diagrams, 11 pictures, as well as 107 sources of literature.